KONRAD ADENAUER STIFTUNG

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՄԱՐ

2020-2021

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՄԱՐ

© ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ

Տպագրությունը ֆինանսավորվել է Կոնրադ Ադենաուեր Հիմնադրամի կողմից

I. ՓԱՍՏԱԹՂԹԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՆՁՆԱԳԻՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԿԱՄ ԱՆՁՆԱԳՐԻ ՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԼՐԱՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է.

- դիմել ՀՀ ոստիկանության Անձնագրային և վիզաների վարչություն (հասցե՝ ք. Երևան, Դավիթաշեն, 4-րդ թաղամաս, 17/10 շենք, թեժ գիծ դիմում-բողոքների և առաջարկությունների համար՝ +374-10-370264 , +374-11-370268 , +374-11-370243) կամ մոտակա տարածքային բաժին,
- Հայաստանում լուսանկարվել և հանձնել մատնադրոշմները ոստիկանության մարմնում:

**** Մինչ անձնագրի տրամադրումը անձին տրվում է անձը հաստատող ժամանակավոր փաստաթուղթ, որպեսզի ունենաք անհրաժեշտ ծառայություններից և տրամադրվող աջակցությունից օգտվելու հնարավորություն: Հաշվի՛ առեք, որ այդ փաստաթուղթը ուժի մեջ է 15 օր:***

**** Եթե անձը գտնվում է քրեակատարողական հիմնարկում, կամ բժշկական հաստատությունում հիվանդանոցային ձևով բժշկական օգնություն և սպասարկում է ստանում, կամ հաշմանդամության, հիվանդության կամ վիճակի, տարիքային կամ այլ խնդիրներով զրկված է ինքնուրույն տեղաշարժվելու հնարավորությունից՝ անձնագիր ստանալու (փոխանակելու) համար լուսանկարահանումն իրականացվում, և մատնադրոշմները վերցվում են իր բնակվելու (գտնվելու) վայրում՝ առանց իրավասու մարմին ներկայանալու:***

II. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ԹԻՎ 1
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ[1]

68.000 ՀՀ դրամ (բացառություններով)

+ լրացուցիչ 15.000 ՀՀ դրամի չափով աջակցություն

- Աջակցությունը տրամադրվում է Լեռնային Ղարաբաղի քաղաքացի և Լեռնային Ղարաբաղում հաշվառված չափահաս և անչափահաս անձանց:
- Լեռնային Ղարաբաղում կենսաթոշակ, Հայաստանում կենսաթոշակ կամ նպաստ ստացող շահառուին աջակցությունը տրամադրվում է նվազագույն աշխատավարձի և շահառուի 2020 թվականի հոկտեմբեր ամսվա կենսաթոշակի կամ նպաստի դրական տարբերության չափով:
- 15.000 ՀՀ դրամ լրացուցիչ աջակցությունը տրամադրվում է, եթե անձը չունի սեփականության իրավունքով Հայաստանում գտնվող անշարժ գույք:
- Միջոցառման շահառու չէ այն անձը, ում անվամբ 2020 թվականի հոկտեմբեր ամսվա համար Հայաստանում հաշվարկվել է աշխատավարձ կամ դրան հավասարեցված այլ եկամուտ:
- Միջոցառման շահառու չէ այն անձը, ում անվամբ 2020 թվականի հոկտեմբեր ամսվա համար Լեռնային Ղարաբաղի պետական կամ համայնքային բյուջեից հաշվարկվել է աշխատավարձ կամ դրան հավասարեցված այլ եկամուտ:
- Միջոցառման շահառու չեն 18-ից (18 տարին լրացել է մինչև

[1] Միջոցառումները համարակալվել են պայմանականորեն:

2020 թվականի սեպտեմբերի 27-ը) մինչև 58 (58 տարին լրացել է 2020 թվականի նոյեմբերի 10-ից հետո) տարեկան արական սեռի անձինք, բացառությամբ 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցողների:

- Միջոցառման շահառու անչափահաս երեխաներին միանվագ դրամական օգնությունը և լրացուցիչ աջակցությունը տրամադրվում է ծնողին (օրինական ներկայացուցչին), անկախ ծնողի՝ միջոցառման շահառու լինելու հանգամանքից:

Սույն միջոցառման շրջանակներում ու՞մ կողմից է նշանակվում և վճարվում դրամական աջակցությունը և ի՞նչ կարգով:

⇒ **Աջակցությունը տրամադրում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայությունը՝ էլեկտրոնային դիմումի հիման վրա:**

⇒ **Դիմումը պետք է ներկայացնել online.ssa.am կայքէջում՝ էլեկտրոնային եղանակով մինչև 2021 թվականի հունվարի 27-ը:**

⇒ **Դիմումը մերժելու, հաստատելու կամ հաշվառելու մասին Ծառայությունն անմիջապես էլեկտրոնային հաղորդագրություն է ուղարկում շահառուի էլեկտրոնային փոստի հասցեին:**

⇒ **Եթե դիմումը մերժվել է, շահառուն կարող է Սոցիալական ապահովության ծառայություն ներկայացնել գրավոր դիմում (այդ թվում՝ e-request.am կայքէջի միջոցով)՝ կցելով մերժման հիմքերին վերաբերող փաստաթղթերի լուսապատճենները:**

⇒ **Դիմումը հաստատվելու դեպքում՝ միանվագ դրամական օգնությունը վճարվում է շահառուին, (անչափահաս շահառուի դեպքում՝ շահառուի ծնողին), այլ անձի՝ նոտարական կարգով վավերացված լիազորագրով, կանխիկ եղանակով՝ Հայփոստի կամ Արցախփոստի միջոցով:**

⇒ **Դրամական աջակցությունը ստանալու նպատակով Հայփոստ կամ Արցախփոստ անհրաժեշտ է դիմել մինչև 2021 թվականի ապրիլի 1-ը, հակառակ դեպքում՝ այն չի վճարվում:**

ԹԻՎ 2
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

300 000 դրամի չափով աջակցություն

- Աջակցությունը տրամադրվում է Ադրբեջանի վերահսկողության տակ անցած Լեռնային Ղարաբաղի համայնքներում հաշվառում ունեցող և մինչև 2020 թվականի սեպտեմբերի 27-ն առնվազն վերջին 3 ամիսը փաստացի այնտեղ բնակված յուրաքանչյուր Լեռնային Ղարաբաղի չափահաս և անչափահաս քաղաքացու:

Սույն միջոցառման շրջանակներում ու՞մ կողմից է նշանակվում և վճարվում դրամական աջակցությունը և ի՞նչ կարգով:

⇒ **Աջակցությունը տրամադրում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայությունը՝ էլեկտրոնային դիմումի հիման վրա:**

⇒ **Դիմումը պետք է ներկայացնել online.ssa.am կայքէջում՝ էլեկտրոնային եղանակով մինչև 2021 թվականի հունվարի 27-ը:**

⇒ **Դիմումը մերժելու, հաստատելու կամ հաշվառելու մասին Ծառայությունն անմիջապես էլեկտրոնային հաղորդագրություն է ուղարկում շահառուի էլեկտրոնային փոստի հասցեին:**

⇒ **Եթե դիմումը մերժվել է, շահառուն կարող է Ծառայություն ներկայացնել գրավոր դիմում (այդ թվում՝ e-request.am կայքէջի միջոցով)՝ կցելով մերժման հիմքերին վերաբերող փաստաթղթերի լուսապատճենները:**

⇒ **Դիմումը հաստատվելու դեպքում՝ միանվագ դրամական օգնությունը վճարվում է շահառուին (անչափահաս շահառուի դեպքում՝ շահառու ծնողին) կամ նրա լիազորած անձին՝ նոտարական կարգով վավերացված լիազորագրով, կանխիկ եղանակով՝ Հայփոստի կամ Արցախփոստի միջոցով:**

⇒ **Դրամական աջակցությունը ստանալու նպատակով Հայփոստ կամ Արցախփոստ անհրաժեշտ է դիմել մինչև 2021 թվականի ապրիլի 1-ը, հակառակ դեպքում՝ այն չի վճարվում:**

ԹԻՎ 3
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

250 000 դրամի չափով աջակցություն

- Միջոցառման շահառու է Լեռնային Ղարաբաղի բնակավայրի հասցեով հաշվառված և մինչև 2020 թվականի սեպտեմբերի 27-ն առնվազն վերջին 3 ամիսը փաստացի բնակված քաղաքացիները (այդ թվում՝ մինչև 18 տարեկան երեխաները):
- Վերը նշված անձինք միջոցառման շահառու կարող են լինել, եթե պատերազմի պատճառած ավերածությունների հետևանքով կամ այլ պատճառներով հաշվառման վայրի հասցեում գտնվող բնակելի անշարժ գույքը դարձել է բնակության համար ոչ պիտանի:
- Միջոցառման շահառու անչափահաս երեխաներին միանվագ դրամական օգնությունը տրամադրվում է ծնողին, եթե ծնողը միջոցառման շահառու է:

Նշված միջոցառման շահառու չեն կարող լինել ԹԻՎ 2 (Աջակցություն՝ 300.000 ՀՀ դրամի չափով) միջոցառման շահառուները:

Սույն միջոցառման շրջանակներում ու՞մ կողմից է նշանակվում և վճարվում դրամական աջակցությունը և ինչ կարգով:

⇒ **Աջակցությունը տրամադրում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայությունը՝ էլեկտրոնային դիմումի հիման վրա:**

⇒ **Դիմումը պետք է ներկայացնել online.ssa.am կայքէջում՝ էլեկտրոնային եղանակով մինչև 2021 թվականի հունվարի 27-ը:**

⇒ **Դիմումը հաստատվելու դեպքում՝ միանվագ դրամական օգնությունը վճարվում է Հայփոստի կամ Արցախփոստի միջոցով մինչև 2021 թվականի մայիսի 1-ը դիմելու դեպքում, հակառակ դեպքում՝ այն չի վճարվում:**

⇒ **Շահառուի (անչափահաս շահառուի դեպքում՝ վճարման ցուցակ ներառված ծնողի) մահվան պատճառով մինչև 2021 թվականի մայիսի 1-ը չվճարված միանվագ դրամական օգնության գումարը վճարվում է շահառուի (անչափահաս շահառուի դեպքում՝ վճարման ցուցակ ներառված ծնողի) ամուսնուն կամ 14 տարին լրացած երեխային կամ Լեռնային Ղարաբաղում շահառուի հետ նույն բնակության վայրի հասցեով բնակվող ընտանիքի այլ անդամին, եթե դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ծառայություն է ներկայացվում մինչև 2021 թվականի հուլիսի 1-ը:**

ԹԻՎ 4
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Ուսման վարձի փոխհատուցում

- Միջոցառումից կարող են օգտվել Հայաստանի միջին մասնագիտական, բարձրագույն և հետբուհական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում սովորող մարտական գործողությունների մասնակիցները, ինչպես նաև մարտական գործողությունների մասնակիցների (օրինական ներկայացուցիչներ՝ ծնող, որդեգրող, խնամակալ) սովորող զավակներն ու ամուսինը:
- 2020-2021 ուսումնական տարվա առաջին կիսամյակի համար պետության կողմից ուսման վարձի մասնակի փոխհատուցում ստացած լինելու դեպքում՝ փոխհատուցումը տրամադրվում է կիսամյակի ուսման վարձի մնացորդային գումարի չափով:
- 2020-2021 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսման վարձը մասնակի կամ ամբողջությամբ վճարված լինելու դեպքում՝ այդ չափով կատարված վճարումը համարվում է նույն ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ուսման վարձի դիմաց կատարված վճարում:
- 2020-2021 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսման վարձը մասնակի կամ ամբողջությամբ վճարված լինելու և ուսումնառությունը 1-ին կիսամյակում ավարտելու դեպքում՝ այդ չափով կատարված վճարումը վերադարձվում է սովորողին (ֆիզիկական անձի կողմից վճարված լինելու պարագայում):

Փոխհատուցում ստանալու նպատակով ու՞ր դիմել և ինչ փաստաթղթեր ներկայացնել:

⇒ **Շահառուն փոխհատուցում ստանալու նպատակով պետք է դիմի ուսումնական այն հաստատություն, որտեղ սովորում է:**

⇒ **Շահառուն փոխհատուցում ստանալու նպատակով պետք է ներկայացնի՝**

- գրավոր դիմում,
- մարտական գործողություններին մասնակցությունը զինված ուժերի կազմում հավաստող փաստաթուղթ (զինվորական կոմիսարիատի տրամադրած տեղեկանք կամ համապատասխան նշմամբ զինվորական հաշվառման գրքույկ կամ այլ զորքերի կազմում մարտական գործողություններին մասնակցած լինելու դեպքում՝ համապատասխան լիազոր պետական մարմնի տրամադրած տեղեկանք),
- այլ փաստաթղթեր (ամուսնության կամ ծննդյան վկայական),
- Ուսումնական հաստատություն անհրաժեշտ է ներկայացնել դիմումը և վերը նշված փաստաթղթերի պատճեններն ու բնօրինակները: Բնօրինակները պատճենների հետ համեմատելուց հետո վերադարձվում են:

ԹԻՎ 5
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Քաղաքացիական անձանց շրջանում զոհերի ընտանիքներին և հաշմանդամություն ձեռք բերած անձանց տրվող միանվագ աջակցություն

- Միջոցառման շահառու կարող են լինել ինչպես Հայաստանի, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի քաղաքացիները:
- Միջոցառումից չեն կարող օգտվել «Սահմանամերձ համայնքների սոցիալական աջակցության մասին» օրենքի հիման վրա միանվագ գումարային աջակցություն կամ հատուցում ստանալու իրավունք ունեցող անձինք:

Սոցիալական աջակցությունը տրամադրվում է միանվագ դրամական օգնության ձևով՝

1) առաջին խմբի հաշմանդամություն ձեռք բերելու դեպքում՝ 3.000.000 դրամի չափով.

2) երկրորդ խմբի հաշմանդամություն ձեռք բերելու դեպքում՝ 2.000.000 դրամի չափով.

3) երրորդ խմբի հաշմանդամություն ձեռք բերելու դեպքում՝ 1.000.000 դրամի չափով.

4) հաշմանդամ երեխայի կարգավիճակ ձեռք բերելու դեպքում՝ 3.000.000 դրամի չափով.

5) զոհված քաղաքացիական անձանց ընտանիքների դեպքում՝ 5.000.000 դրամի չափով:

**Միջոցառման շրջանակում ընտանիքի անդամներ են համարվում՝ ամուսինը, զավակը, ծնողը, դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ 18 տարին չլրացած կամ անգործունակ ճանաչված կամ մինչև 23 տարեկան առկա ցերեկային ուսուցմամբ սովորող ուսանող քույրը և եղբայրը, ինչպես նաև զոհված քաղաքացու խնամքի տակ գտնված 18 տարեկան և դրանից բարձր տարիքի հաշմանդամություն ունեցող քույրը և եղբայրը, եթե հաշմանդամ են ճանաչվել մինչև 18 տարին լրանալը:*

**Ընդ որում, քույրը և եղբայրը սոցիալական աջակցության իրավունքից կարող են օգտվել, եթե նրանց ծնողները կամ միակ ծնողը մահացած են կամ ունեն աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության առնվազն երրորդ աստիճանի սահմանափակում:*

Սույն միջոցառման շրջանակներում ու՞մ կողմից է նշանակվում և վճարվում դրամական աջակցությունը և ի՞նչ կարգով:

⇒ **Աջակցությունը տրամադրում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը՝ շահառուի ներկայացրած դիմումի հիման վրա:**

⇒ **Միջոցառումից օգտվելու համար դիմումը ներկայացվում է էլեկտրոնային եղանակով՝ մինչև 2021 թվականի ապրիլի 1-ը:**

⇒ **Դիմումը ներկայացնելու համար շահառուն e-request.am էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի կամ նախարարության պաշտոնական mlsa.am կայքէջի «Գրեք նամակ» բաժնի միջոցով նախարարություն է ներկայացնում դիմում և անհրաժեշտ փաստաթղթեր:**

⇒ Աջակցությունը նշանակելու կամ մերժելու մասին որոշումը նախարարությունը կայացնում է դիմումը ստանալուց հետո առավելագույնը 30 օրերի ընթացքում, որի մասին գրավոր տեղեկացվում է դիմողը:

⇒ Աջակցությունը տրամադրվում է անկանխիկ եղանակով՝ դիմումը հաստատելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ համապատասխան գումարը բանկային հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

⇒ Աջակցության գումարը չի կարող արգելադրվել, բռնագանձվել կամ հաշվանցվել հաճախորդի պարտավորությունների դիմաց:

ԹԻՎ 6
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Հայաստանում փաստացի գտնվող Լեռնային Ղարաբաղի գործազուրկ քաղաքացիների՝ աշխատանքային փորձ ձեռք բերելու, աշխատաշուկայում առավել մրցունակ դառնալու և աշխատանքի տեղավորվելու միջոցառում

⇒ Միջոցառման շահառու են Ադրբեջանի վերահսկողության տակ անցած համայնքներում հաշվառված քաղաքացիների աջակցության (300.000 ՀՀ դրամ աջակցություն) միջոցառման շահառու գործազուրկ անձինք:

⇒ Միջոցառման շրջանակում գործատու իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ և շահառուի միջև կնքվում է աշխատանքային պայմանագիր:

⇒ Միջոցառման շրջանակում գործազուրկ անձին վճարվում է ամսական աշխատավարձ՝ 100.000 ՀՀ դրամի չափով:

⇒ Միջոցառման շրջանակում աշխատանքային փորձի ձեռքբերման գործընթացը կազմակերպող մասնագետին ամսական վճարվում է 34.000 ՀՀ դրամի չափով գումար:

⇒ Գործազուրկ անձը կարող է լինել միջոցառման շահառու մեկ անգամ՝ 3 ամիս տևողությամբ:

⇒ Աջակցության տրամադրումը դադարեցվում է շահառուի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծվելու դեպքում:

ԹԻՎ 7
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Հայաստանում փաստացի գտնվող Լեռնային Ղարաբաղի գործազուրկ քաղաքացիների ժամանակավոր զբաղվածության ապահովան միջոցառում

- Միջոցառման շահառու են Ադրբեջանի վերահսկողության տակ անցած համայնքներում հաշվառված քաղաքացիների աջակցության (300.000 ՀՀ դրամ աջակցություն) միջոցառման շահառու գործազուրկ անձինք:
- Միջոցառումն իրականացվում է համայնքի ղեկավարի կամ նրա ներկայացուցչի ներկայացրած վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման ծրագրի նախագծի հիման վրա:
- Միջոցառման շրջանակում համայնքի ղեկավարը կամ նրա ներկայացուցիչը յուրաքանչյուր շահառուի հետ կնքում է աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագիր:
- Շահառուին՝ օժանդակ աշխատանքներ կատարելու համար մեկ աշխատանքային օրվա համար վճարվում է 8.000 ՀՀ դրամ (ներառյալ եկամտային հարկը, դրոշմանիշային վճարը, ինչպես նաև օրենքով սահմանված դեպքերում՝ նպատակային սոցիալական վճարը): Աշխատավարձը վճարվում է աշխատած լրիվ օրերի համար:
- Շահառուն չի կարող միաժամանակ ընդգրկվել մեկից ավելի վարձատրվող հասարակական աշխատանքներում:
- Աջակցության տրամադրումը դադարեցվում է շահառուի հետ կնքված աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագիրը լուծվելու դեպքում:

**** Միջոցառումներից օգտվելու համար էլեկտրոնային դիմում ներկայացնելու անհնարինության կամ դժվարությունների դեպքում անձը կարող է դիմել ՀՀ սոցիալական ապահովության ծառայության ցանկացած տարածքային բաժին կամ զանգահարել 114 «թեժ գիծ» հեռախոսահամարին:***

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ՀԱՅԱՍՏԱՆ ՏԵՂԱՓՈԽՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՑԱՐԱՆՈՎ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՐՑՈՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է.

- զանգահարել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 114 «թեժ գիծ» հեռախոսահամարին, կամ՝
- այցելել Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Հ. Ներսիսյան 14/1 հասցեի «Հայորդաց տան» շենքում ստեղծված ժամանակավոր կայանման կետ: Կարիքների գնահատում իրականացվելուց հետո ժամանակավոր կայանման կետից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը կազմակերպում է համապատասխան կացարաններ տեղափոխումը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ՀԱՅԱՍՏԱՆ ՏԵՂԱՓՈԽՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԲՆԱՒՐԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԴԻՄԵԼ.

- տարածքային կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմիններին. Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետարան կամ վարչական շրջաններ, մարզերում՝ մարզպետարաններ կամ համայնքապետարաններ:

**Հայաստանում ոչ պետության նախաձեռնությամբ և օժանդակությամբ բնակություն հաստատած անձանց դեպքում նախ անհրաժեշտ է դիմել տեղական ինքնակառավարման մարմիններին տվյալները հաշվառելու համար:*

- **Լեռնային Ղարաբաղից Հայաստան տեղափոխված անձը վարչարարությանն առնչվող և սոցիալական սպասարկման ծառայությունների հարցերով (սոցիալական ապահովության վճարների ստացում, փաստաթղթերի գրանցում և այլ ծառայություններ) ու այլ բնույթի աջակցության ապահովման նպատակով կարող է դիմել Հայաստանում Լեռնային Ղարաբաղի կառավարության շտաբ՝**
  - այցելելով Շտաբի գլխամասային գրասենյակ (հասցե՝ ք. Երևան, Շենգավիթ վարչական շրջան, Գարեգին Նժդեհի 23/1),
  - զանգահարելով թեժ գծի (010) 59-03-39 և կարճ 81-38 հեռախոսահամարներին:
- **Լեռնային Ղարաբաղից Հայաստան տեղափոխված անձանց սոցիալական ապահովության վճարներ (կենսաթոշակներ, նպաստներ) Հայաստանում նշանակելու համար կարելի է դիմել նաև՝**
  - Սոցիալական ապահովության ծառայության տարածքային բաժիններ:

** սոցիալական ապահովության վճարները կանխիկ եղանակով վճարվում են Հայփոստի միջոցով:*

III. ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ՀԱՅԱՍՏԱՆ ՏԵՂԱՓՈԽՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ՀԱՅԱՍՏԱՆ ՏԵՂԱՓՈԽՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԴԻՄԵԼ.

- ժամանակավոր բնակության վայրին առավել մոտ գտնվող դպրոց՝ անգամ համապատասխան փաստաթղթերի բացակայությամբ,
- խոցելի խմբերում երեխաներին և նրանց ընտանիքներին արագ արձագանքելու, ուղղորդելու կամ հոգեբանական ծառայություն տրամադրելու նպատակով զանգահարել 08-0001-007 անվճար «թեժ գիծ» հեռախոսահամարով:

IV. ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ՀԱՅԱՍՏԱՆ ՏԵՂԱՓՈԽՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ

Լեռնային Ղարաբաղում հայտարարված արտակարգ իրավիճակներում կամ ռազմական կամ ահաբեկչական գործողությունների արդյունքում տուժած անձանց բժշկական օգնությունն ու սպասարկումն իրականացվում է պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով:

ՏՈՒԺԱԾ ԱՆՁԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԱՐՈՂ Է.

- իր ընտրած բժշկի մոտ սահմանված կարգով գրանցվել,
- բժիշկ կարող է ընտրել իր մշտական բնակության վայրի (մարզի) վարչական սահմաններում, իսկ Երևան քաղաքի դեպքում՝ քաղաքի վարչական սահմաններում գործող ցանկացած պոլիկլինիկայում աշխատող բժիշկներից:

ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՎԱՐԱԿԻ (COVID-19) ԱԽՏԱՆՇԱՆՆԵՐ (ՋԵՐՄՈՒԹՅՈՒՆ, ՀԱՋ, ԿՈԿՈՐԴԻ ՑԱՎ, ՔԹԻՑ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ԴԺՎԱՐԱՑԱԾ ՇՆՉԱՌՈՒԹՅՈՒՆ և ԱՅԼՆ) ՈՒՆԵՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԴԻՄԵԼ.

- իր ընտրած պոլիկլինիկայի բժշկին. Կորոնավիրուսային հիվանդության կասկածելի դեպք հայտնաբերելիս կազմակերպվում են նմուշառում և ուղեգրվում թեստավորման,
- այնուհետև, ԱԱՊ բժիշկը կապ է հաստատում COVID-19 հաստատված պացիենտի հետ, ճշտում գանգատները, ուղեկցող հիվանդությունները,
- ելնելով պացիենտի գանգատներից՝ բժիշկը որոշում է կայացնում տնային այցելության մասին՝ տեղում գնահատելու պացիենտի ծանրության աստիճանը, որի հիման վրա դիտարկվում է նաև հոսպիտալացման անհրաժեշտությունը,
- COVID-19-ով պացիենտները հոսպիտալացվում են ՀՀ առողջապահության նախարարի հրամանով հաստատված ուղեցույցի համաձայն (ցուցումներ. 60-ից բարձր տարիք, հղիություն, քրոնիկ սրտանոթային հիվանդություն, զարկերակային գերճնշում, շաքարային դիաբետ, բարձր ջերմություն, սովորաբար 38 °C-ից բարձր և այլն),
- հաստատված COVID-19-ով պացիենտը հոսպիտալացվում է, եթե արյան թթվածնով հագեցվածությունը SpO2 ≤93% և/կամ շնչառության հաճախությունը >22/րոպե է:

ՏՈՒԺԱԾ ԱՆՁԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԱՄԲՈՒԼԱՏՈՐ-ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԿԱՐՈՂ Է ՍՏԱՆԱԼ ՆԱԵՎ ԴԵՂԵՐ

***Ի գիտություն! Պոլիկլինիկայի կողմից դեղի դուրսգրումն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի հրամանով հաստատված՝ հիմնական դեղերի ցանկին համապատասխան:**

➢ Տուժած անձն օգտվում է պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով բժշկական օգնությունից և սպասարկումից (այդ թվում՝ հիվանդանոցային)՝ սահմանված ծավալներով, նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաներով մատուցվող բժշկական օգնության և սպասարկման նախատեսված ծավալներով:

Բժշկական օգնության և սպասարկման հարցերով անհրաժեշտ է զանգահարել ՀՀ առողջապահության նախարարության 8003 «թեժ գիծ» հեռախոսահամարին:

V. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻՆ ԴԻՄԵԼԸ

- Յուրաքանչյուր ոք, ինչպես նաև յուրաքանչյուր իրավաբանական անձ ունի Պաշտպանին դիմելու իրավունք:
- Եթե կարծում եք, որ Ձեր իրավունքները խախտվել են պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց կամ հանրային ծառայության ոլորտում գործող կազմակերպությունների կողմից, ապա կարող եք դիմել Պաշտպանին:
- Ձեր բողոքը կքննարկվի, եթե այն ներկայացրել եք մեկ տարվա ընթացքում այն օրվանից, երբ իմացել եք կամ պետք է իմացած լինեիք Ձեր իրավունքների ենթադրյալ խախտման մասին:
- Բողոքը կարող եք ներկայացնել յուրաքանչյուր լեզվով ինչպես գրավոր (թղթային կամ առցանց), այնպես էլ բանավոր եղանակով:
- Ձեր բողոքը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում Պաշտպանը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը՝
  1. բողոքը քննարկման ընդունելու մասին.
  2. բողոքը չքննարկելու մասին.
  3. բողոք ներկայացրած անձին իր իրավունքների և ազատությունների պաշտպանության հնարավորությունները ներկայացնելու մասին.
  4. բողոքն այլ մարմնի քննարկմանը փոխանցելու մասին:

- Բողոքի քննարկման արդյունքում Պաշտպանի կողմից ընդունվում է հետևյալ որոշումներից մեկը՝
  1. Մարդու իրավունքների կամ ազատությունների խախտման մասին.
  2. Մարդու իրավունքների կամ ազատությունների խախտման բացակայության մասին.
  3. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելու վերաբերյալ դատարան հայց ներկայացնելու մասին.
  4. Բողոքի քննարկումը դադարեցնելու մասին:
- Նշված որոշումներից առաջինի հիման վրա Պաշտպանը խախտում կատարած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին կամ դրա պաշտոնատար անձին կամ կազմակերպությանն առաջարկում է ողջամիտ ժամկետում վերացնել խախտումը՝ նշելով մարդու իրավունքների կամ ազատությունների վերականգնման համար անհրաժեշտ միջոցառումները:

Հեռ.՝ +374 96 116 100
Հասցե՝ Երևան 0002, Պուշկին 56ա
Էլ. փոստ՝ ombuds@ombuds.am
Թեժ գիծ՝ 116
Կայք՝ www.ombuds.am